# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԱԶՄԵՐԸ[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններում (Ալեք եւ Մարի Մանուկյան Գանձատուն, Մայր Տաճարի եւ Հին Վեհարանի թանգարաններ) ցուցադրվում են շուրջ 70 կրկնակազմեր: Դրանք *կրկնակազմեր* են կոչվում, որովհետեւ ավելացվել են ձեռագրերի կամ տպագրերի բուն կազմերի վրա, որոնք սովորաբար լինում են տախտակե կամ սրվարաթղթե միջուկով շագանակագույն կաշիներ: Այդ կրկնակազմերը ժամանակագրական առումով ընդգրկում են 1499 թվականից մինչեւ 1914 թվականը. նրանց մեծ մասը 18-19-րդ դարերի գործեր են: Կրկնակազմերի գերակշռող մասը, ըստ պարունակած նյութի բովանդակության, ավելացվել է Ավետարանների վրա, համեմատաբար քիչ են հինկտակարանային գրքերը, կա մեկ Պարզատումար եւ մեկ Սաղմոս: Որոշ կրկնակազմեր էլ ժամանակի ընթացքում կորցրել են իրենց միջուկ-ներդիրները[2]. դրանք, հավանաբար, կցված են եղել Ավետարանների: Կրկնակազմերին եւ կազմին ամրացված մետաղե խաչերին հաճախ հանդիպում են փորագրված արձանագրություններ, որոնք հիշատակագրական բնույթի են: Նրանցում հիշատակվում են՝ ա) **սրացողների կամ հետագա տերերի անուններ՝** Քնքուշ մայր (1499 թ., Արծկե), Յոհան, Մեհրաբ, Շահում, Մարտիրոս (1639 թ.), Ցանա, Պօղոս, Հոռոմ (1641 թ.), Կիրակոսի որդի Զաքարէ (1677 թ.), Փարիխան, Ովանէսի կողակից Սուղում, Առաքելի կողակից Աջաբխան, Շուշան, Ցակոբջան (1678 թ.), Աթուն, Վարդան, Քամէ (1683 թ.), Աթան (17-րդ դ.), Առաքել (1710 թ.), Փիլիպպոսի որդի տէր Եղիսէ (1714 թ.), Մարտիրոս վրդ. ([1759] թ.), Կարապետի որդի ոսկերիչ Պետրոս (1781 թ.), մահտեսի Աղեքսանդր, մահտեսի Յովհաննէս (1781 թ.), Զեյթունցի Ցակոբ քահանայ (1788 թ.), մահտեսի Ցարութիւն (1793 թ.), մահտեսի Օհաննէս (1795 թ.), Սրեփանոս եպս. (1797 թ.), Պապաեան Անթառամ (1798 թ.), Դանիէլի որդի մահտեսի Օհաննէս (1799 թ.), Հիպոլոս, Սուլթան (18-րդ դ.), Աբրահամի դուստր Սրբուհի (1804 թ.), Սահակի որդի Մարգար եւ Փիլիպոսի դուստր Մարթա (1814 թ.), Էդիրնեցի մահտեսի Մկրտիչ (1819 թ.), Փիլիպեցի Դավիթ աղայի կին Մարիամ, Թագաւոր աղայի կին Կատարինէ եւ Միրձան աղայի կին Եվայ (1820 թ), տէր Յովհաննէս (1824 թ.), տէր Անտոն աւագ քահանայ ([1828] թ.), տէր Ցարութիւն (1837 թ.), Աբրահամ (1837 թ.), հանգուցեալ Մուրատ (1846 թ.), Եղիսաբէթ, մահտեսի Կարապետ եւ Մանուկ (1855 թ.), Գրիգոր արքեպս. Զուղայեցի (1879 թ.), բ) **կազմեր սրեղծողների անուններ՝** խոջա Թումենց Գրիգոր (1768 թ.), Փիրկալամի որդի Յովհաննէս (1803 թ.), Խաչատուր վրդ. (1819 թ.), գ) **սրեղծման վայրեր՝** Ս. Ասրուածածին եւ Պատերազմի Ս. Նշան (Արծկե, 1499 թ.), Ս. Գէորգ (Լիմ, 1759 թ.), Ս. Ասրուածածին (1768 թ.), Մշոյ Ս. Կարապետ

1 Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների տնօրեն Տ. Ասողիկ քհն. Կարապետյանի եւ Գանձատան աշխատակիցների աջակցությամբ գրված այս հոդվածի համար հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը:

2 Տես Գանձատուն, թ. 65, 153, 248, 275, 276, 280-282:

(1769, 1799, [1861] թթ.), Ս. Թեոդորոս (1781, 1793, 1795 թթ.), Ս. Թադէոս Առաքեալ (1797, 1814 թթ.), Կ. Պոլիս (1798 թ.), Ս. Կիրակոս (18-րդ դ.), Ս. Էջմիածին (18-րդ դ., 1819 թ.), Վանի Ս. Էջմիածին (1803 թ.), Քիշինեւի Ս. Աստուածածին ([1828] թ.), Շխնոց Ս. Յովհաննէս (1837 թ., Էրզրում), Կարնոյ Ս. Աստուածածին (1837 թ.), Հազրու Ս. Շամցունկա եկեղեցի (1846 թ.), Ս. Պողոս եւ Պետրոս եկեղեցի (1855 թ.), Կալկաթա (1879 թ.):

Սույն կրկնակազմերը պատրաստված են արծաթից եւ ոսկուց եւ հաճախ զարդարված են թանկարժեք ու հասարակ գունավոր քարերով: Կրկնակազմերն ընդհանրապես պատրաստում էին ոսկերիչ կամ արծաթագործ կազմարարները: Նրանք հիմնականում օգտագործում էին արծաթ եւ ոսկի, որոնցից կրկնակազմեր էին ստեղծում ձուլման,[3] ճնշման, կռման, դրվագման, ոսկեթելի եւ արծաթաթելի ու հատիկավոր հյուսվածքի (չիֆթիշ)[4] եղանակներով, փորագրությամբ, սեւադով, արծնապատումով (էմալապատում),[5] ոսկեզօծմամբ եւ այլն[6]: Հաճախ ձուլման հետ միասին կիրառվել են նաեւ կռելու եւ դրվագելու եղանակները, իսկ երբեմն էլ թելահատիկավոր եղանակը կիրառված է դրվագման եւ փորագրման ճարտարվեստի հետ խառը[7]:

Կրկնակազմերի զարդարումը սերտորեն կապված է մանրանկարչության, քանդակագործության եւ զարդարվեստի ընդհանուր զարգացման հետ: Նրանք զարդարված են տերունական պատկերագրություններով, զարդանախշերով ու ծաղկազարդերով[8]: Ինչպես վերեւում նշեցինք, կրկնակազմերի մեծ մասն ավելացվել է Ավետարան բովանդակող գրքերի վրա, ըստ այդմ էլ, սովորաբար, Ա փեղկին պատկերված է *Խաչելություն*: Այն ունի կարեւորագույն խորհրդաբանություն. խաչը դրվեց երկրի եւ երկնքի միջեւ որպես Աստծու

3 Տե՛ս Մայր Տաճար թ. 875, 878, 880, Գանձատուն թ. 48, 108, 41, 248, 273 (այս եղանակով են պատրաստված մեր արծաթե կազմերի մի մասը եւ, հատկապես, նրանց վրա եղած զարդերը):

4 Տե՛ս Մայր Տաճար թ. 871, 872:

5 Տե՛ս Մայր Տաճար թ. 881, Գանձատուն թ. 41:

6 Տե՛ս **Վ. Ա. Աբրահամյան,** Արհեստները Հայաստանում 4-13-րդ դդ., Երեւան, 1956, էջ 113, 121-153, **Ա. Մալխասյան,** Հայերեն ձեռագրերի կազմերը եւ նրանց պատրաստման եղանակները, «Էջմիածին», 1995, թ. 2-3, 1995, էջ 75-80:

7 Տե՛ս Մայր Տաճար թ. 54, 881:

8 Մեզ հասած կրկնակազմերի միայն մի մասն ունի գեղարվեստական արժեք: Հայկ Տեր-Ղեւոնդյանը նկատում է, որ «... թէեւ մնացածները իրենց որակով ցանկալի արժէքներ չեն ներկայացներ, սակայն հայ ազգային գանձարանի հազուագիւտ նմոյշներէն են, նշխարներ, որոնք արժանի են մեր ուշադրութեան եւ հոգատարութեան» (տե՛ս, **Հ. Տեր-Ղեւոնդյան**, Երեւանի Մատենադարանի մեսրոպեայ ձեռագրակազմերու ցուցակ, Ա մաս, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1984, էջ 283): Կրկնակազմերին արված պատկերագրությունները նույնպես գալիս են քրիստոնեական դասական հնադարից եւ հիմնականում համաքրիստոնեական կանոնական հորինվածքներ են: Միջնադարյան Հայաստանում արվեստն ընդհանրապես կանոնական էր, որն ինքնին տեսականորեն մշակված ու հղկված խորհրդաբանական, պատկերագրական, դավանաբանական, գեղարվեստական սկզբունքների հանրագումար էր: Կանոնական լինելով հանդերձ՝ հայկական միջնադարյան արվեստն ինքնատիպ էր թե՛ պատկերագրությամբ եւ թե՛ գեղարվեստական, ոճական բազմազանությամբ (տե՛ս «Ավետարանական պատկերներ», հեղինակ-կազմողներ՝ Մաթեւոսյան Կ., Ավետիսյան Ա., Երեւան, 1993, էջ 5-6): Համաքրիստոնեական պատկերագրության կանոնական հորինվածքներն իրենց մեջ շատ հաճախ պարունակում են մանրամասներ, որոնք, բացակայելով ընդհանուր կանոնում, պայմանավորված են թարգմանական որեւէ երկի հայացված տարբերակի բովանդակությամբ: «Հայ միջնադարյան կերպարվեստի հորինվածքային առանձնահատկություններն օրինակարգելիս,- նկատում է **Հ. Քյոսեյանը**,- կարեւոր դեր է վերապահվել ինչպես սուրբգրային պարականոններին, այնպես էլ մեկնաբանական գրականությանը: Սրանք հիմք են ծառայել հորինվածքային շատ ձեւերի համար: Վերջիններս լայնորեն կիրարկվել են մասնավորաբար ավետարանական պատկերաշարում» (տե՛ս **Հ. Քյոսեյան**, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի ասպվածաբանության (Հայ միջնադարյան կերպարվեստի ասպվածաբանության շուրջ), Ս. Էջմիածին, 1995, էջ 7):

եւ մարդկանց հաշտության նշան, Նոր Ուխտ, որը սրբագործվեց Հիսուսի մաքրագործող Արյամբ[9]: Խաչից ձախ եւ աջ[10] պատկերված են Մարիամ Աստվածածինը եւ Հովհաննես ավետարանիչը[11]: Խաչելության վերեւում դիմապատկեր արեգակ եւ լուսին[12] են, ներքեւում՝ Ադամի գանգն է: Որոշ կազմերին խաչի աջ կողմում՝ Հովհաննեսից առաջ, պատկերված է ծնկաչոք, ներքեւի խաչափայտին փարված կին, որը, հավանաբար, Մարիամներից մեկն է կամ էլ պատկերված է Աստվածամայրը «յընթացս», այսինքն՝ ձախ կողմում պատկերված է Աստվածամոր գալուստը, իսկ աջում՝ նրա ողբը[13]: Երբեմն էլ Աստվածամոր եւ Հովհաննեսի կողքին հայտնվում են մեկական այլ պատկերներ[14]: Խաչելության տեսարանում Մարիամի եւ Հովհաննեսի փոխարեն հանդիպում է երեք կանանց եւ մեկ նիզակավոր զինվորի պատկերագրություն եւս[15]: Կրկնակազմերի Ա (կամ Բ) փեղկին երբեմն պատկերվում է *Ավետում*[16], որը ներկայացնում է Հիսուսի մարդեղության՝ երկրային առաքելության սկզբնավորումը: Կրկնակազմերի Բ փեղկերին սովորաբար պատկերված է *Աստվածամայրը*՝ մանուկ Հիսուսը գրկին[17], ոտքերի տակ դեպի վեր ուղղված կիսալուսին[18]: Հաճախակի հանդիպում է *Հարության* տեսարանը[19], երբեմն՝ *Ծնունդյան* պատկերագրությունը[20]: Երկու փեղկերի անկյուններում փակցված են լինում ավետարանիչների կամ նրանց խորհրդանիշների (երբեմն այս երկուսն իրար հետ միասին) կամ հրեշտակների պատկերներ[21]: Կրկնակազմ փեղկերին, եզրագծում եւ ազատ մնացած մասերում, երբեմն նաեւ կազմի մեջքին եւ դռնակ(ներ)ին հանդիպում են գեղեցիկ զարդապատկերներ եւ ծաղկազարդեր[22]: Պատկերագրություն ունեցող

9 «Ավետարանական պատկերներ», էջ 75:

10 Բոլոր դեպքերում նկատի ունենք դիմահայաց տարբերակը:

11 Տե՛ս Գանձատուն թ. 36, 100, 101, 105, Մայր Տաճար թ. 886 եւն:

12 Երկու լուսատուների միաժամանակյա պատկերումը ցույց է տալիս խաչելության հետեւանքով առաջացած բնության եւ ժամանակի օրինաչափության խախտումը (տե՛ս **Ն. Քյոսեյան**, նշվ. աշխ., էջ 18): Արեւն ու լուսինը խորհրդանշում են Հիսուսի գալիք դատաստանը եւ Աստուծո հաստատուն, անփոփոխ վիճակը (արեւ)՝ ի հակադրություն Սատանայի (լուսին) փոփոխական անկատարությանը (տե՛ս, «Ավետարանական պատկերներ», էջ 76):

13 Տե՛ս Գանձատուն թ. 107, 148, 248, Մայր Տաճար թ. 883, 855 եւն:

14 Տե՛ս Գանձատուն թ. 33, 35, 273 եւն:

15 Տե՛ս Գանձատուն թ. 280-281, 1768 թ.:

16 Տե՛ս Գանձատուն թ. 157, 158, 274:

17 Տե՛ս Գանձատուն թ. 33, 37, 100, 148, 153, Մայր Տաճար թ. 570, 880, 886 եւն:

18 Պատկերագրության այս շարքում առանձնանում է 1741 թ. Կեսարիայում Շահմիր Մ. Հակոբի պատրաստած ձեռագիր Ճաշոցի կրկնակազմը, ուր պատկերված է Աստվածամոր թագադրումը: Աստվածամոր ոտքերի տակ քանդակված է օձ, որը կանոնական պատկերագրություն չէ եւ խորհրդանշում է Եվային. օձի պատկերագրությունը փոխարինել է կիսալուսնին (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. No 10356):

19 Տե՛ս Գանձատուն թ. 101, 105, 106, 107, 153, 248 եւն: Նախասպեղծ Ադամի (հին մարդ) պատվիրանազանցության հետեւանքով ողջ տիեզերքը հայտնվեց մահվան ճիրաններում, եւ Ադամի հոգեղեն եւ լուսավոր մարմինը ենթակա դարձավ մահվան: Հիսուս Քրիստոսի (նոր մարդ) խաչի ճանապարհով եւ հարությամբ վերականգնվեց ադամական մարմնի նախնական անապական վիճակը, խորտակվեցին դժոխքի դռները, եւ մահվան հրեշտակը (Սատանան) զրկվեց իր մահաբեր խայթից՝ կապվելով Քրիստոսի կենարար խաչի եւ հաղթական հարության ամենազոր կապանքով (տե՛ս, «Ավետարանական պատկերներ», էջ 81, 83):

20 Տե՛ս Գանձատուն թ. 36, 274, 275, 276 եւն:

21 Կրկնակազմերի պատկերագրությունը հմմտ. **Э. Корхмазян**, К вопросу о каноне и стиле в армянской миниатюре по памятникам XIII-XIV вв., «Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիում», h. IV, Երեւան, 1978, էջ 51-56:

22 Աս. Մնացականյանը հայկական զարդարվեստի մասին խոսելիս նկատում է, որ հայկական հին ծեսերի, պատկերացումների, կենցաղի, դիցաբանության, բանահյուսության, զարդարվեստի մեջ եւ այլ բնագավառներում վիթխարի տեղ են գրավում ծաղիկներին ու վարսանդապտղային օրգաններին նվիրված մոտիվները: Այս

կրկնակազմերից առանձնակի հիշատակելի են Գանձատան թ. 280, 281 (Ս. Աստվածածին, 1768 թ.), 106 (Ս. Թեոդորոս, 1781 թ.), 107 (Ս. Թեոդորոս, 1793 թ.), 108 (1799 թ.), 101 (Կ. Պոլիս, 18-րդ դ.), 105 (18-րդ դ.), 273 (Կալկաթա, 1879 թ.), Մայր Տաճարի թ. 879 (Կ. Պոլիս, 1798 թ.) կրկնակազմերը:

Ցուրօրինակ պատկերագրությամբ առանձնանում են 1798 թ. Կ. Պոլսում պատրաստված արծաթե կրկնակազմի երկու փեղկերը (նկար 1), որոնք ավելացվել են 1796 թ. Կ. Պոլսում տպագրված Ավետարանի բուն կազմին (Մայր Տաճար թ. 879)[23]: Կրկնակազմ թիթեղները պատրաստված են արծաթից, ոսկեզօծ դրվագման եղանակով: Ա փեղկի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Ավետարանի տեր Պապայան մահտեսի Կարապետը Կ. Պոլսում արծաթե կրկնակազմը պատրաստել է տվել իր՝ Պապայան հայրերի հիշատակին եւ Էջմիածնի նվիրակ Գալուստ վարդապետի ձեռքով 1798 թ. նվիրաբերել Ս. Էջմիածնին. «Ց(Ի)Ծ(Ա)Տ(Ա)Կ Է Ս(ՈՒՐ)Բ ԱՒԵՏ[Ա]Ր[Ա]ՆՍ ՊԱՊԱԵԱՆ ՀԱՐՍՆ՝ ԱՆԴ[Ա]Ռ[Ա]ՄԻՆ <u>ԵՒ</u> ԱՌՆ Ն[Ո]Ր[Ա] Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս Հ(Ա)ՆԳ(ՈՒ)ՑԵ(Ա)Լ /Մ(Ա)Հ(ՏԵՍ)Ի Հ(Ա)ՑՐ(Ա)Պ(Ե)ՏԻՆ <u>ԵՒ</u> Ծ'ՆՈՂԻՆ ԻՒՐՈՑ ՍՏ(Ե)ՓԱՆԻՆ, Ի ԴՈՒՌՆ Ս(ՈՒՐ)Բ ԷՋՄԻԱԾԻՆ, /ՁԵՌԱՄԲ ՆԻՒՐԱԿ ԳԱԼՈՒՍՏ Վ(Ա)ՐԴ(Ա)Պ(Ե)ՏԻՆ, Ի ՌՄԽԷ (1798) ԹՈՒՈՋ, Ի ՄԵԾՆ ՊՕԼԻՍ», «ՊԱՊԱՑԵԱՆ Մ(ԱՀ)Տ(Ե)ՍԻ /Կ(Ա)Ր(Ա)Պ(ԵՏ)ԻՆ Է, Ձ[Ե]Ռ[Ա]ՄԲ /ԱԲՐ[Ա]Հ[Ա]Մ Վ(ԱՐ)Դ(ԱՊԵ)ՏԻՆ»[24]: Կրկնակազմի Ա փեղկի վերին մասում՝ ամպերից վեր, պատկերված է Ս. Երրորդություն. ձախ մասում Հիսուսն է՝ կլոր, ճաճանչավոր լուսապսակով, աջում՝ Հայր Աստվածը եռանկյուն, ճաճանչավոր լուսապսակով, իսկ միջնամասի վերեւում՝ աղավնակերպ Սուրբ Հոգին է: Փեղկի միջնամասի բարձրաքանդակ ամպերի մեջ՝ ձախ եւ աջ կողմերում, դրվագված են մեկական ծնկաչոք հրեշտակներ, որոնց միջնամասերում չորս հրեշտակների գլխապատկերներ են: Ա փեղկի ներքեւի հատվածում՝ գեղեցիկ կամարների մեջ,

---

երեւույթի հիմքում ընկած էր այն մեծ դերը, որ խաղացել է բուսական աշխարհը նախնական երկրագործների եւ անասնապահների կյանքում, որոնց կյանքի գլխավոր նյութական աղբյուրներից մեկը՝ պտղաբերությունը, սկզբնավորվում եւ զարգանում է հիշյալ օրգանների մեջ եւ նրանց շնորհիվ: Դրանք, բնականաբար, դիտվել են որպես պտղաբերության օրգաններ, ուստի եւ նրանց ձեւերով մշակվել է համապատասխան գաղափարախոսություն: Այս վերջիններս կազմել են երկու հիմնական խումբ՝ ծաղկային եւ վարսանդա-պտղային, որոնք զարգացել են՝ հիմք ունենալով բուսական աշխարհի այդ օրգանների բնական ձեւերը: Բուսական այդ գաղափարաձեւերի մեջ ընդգրկվել է նաեւ կենդանական աշխարհի հետ կապված պտղաբերության հասկացողությունը, որոնց հիման վրա էլ ստեղծվել են նոր, ավելի բարդ կենդանաբուսական մոտիվներ: Հետագայում քրիստոնեական խաչը, փոխարինելով վարսանդապտղային սիմվոլին, հաճախ երեւան է գալիս նրա հետ միասին՝ միշտ նրան ենթարկելով իրեն. տես **Աս. Մնացականյան**, Հայկական զարդարվեստ: Հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը, Երեւան, 1955, էջ 80-81:

23 Կազմի մեջքը պատրաստված է 6 զույգ օղակաձեւ շղթաներից, իսկ փակիչներն այժմ ընկած են (եղել են ձեռնանման):

24 Արձանագրությունների վերծանման համար օգտագործել ենք ընդունված հետեւյալ նշանները.

[ ]- լրացվում են բացակայող կամ չպահպանված տառերն ու տառաշարքերը,

< >- տառը կամ տառաշարքը արձանագրված են, բայց ավելորդ են,

( )- ա. բացվում են հապավումները, բ. նշվում է Փրկչի թվականը, գ. թավից հետո արտահայտվում է ճիշտ տառը,

/- նշվում է տողի սկիզբը,

// - նշվում է նույն տողի շարունակությունը հաջորդ փեղկի վրա,

... - նշվում է արձանագրության վնասված մասը (անկախ նիշերի քանակից),

? ?- լրացվում են վնասված կամ ջնջված տառերը, որոնք հասկացվում են,

**X**-թավ (bold) նշվում են ուղղագրական սահմանված կանոններից շեղումները,

<u>X</u>-ընդգծված (underline) նշվում են կապգրությունները:

Գանձատուն թ. 41, 18-րդ դ., Կ. Պոլի՞ս, Կենարիա՞:
Արծաթ, արծնապատ: Դրագում:



Մայր Տաճար թ. 879, 1798 թ., Կ. Պոլիս:
Ստացող՝ Պապայեան մահտնի Կարապետ: Արծաթ, ոսկեզօծ:
Դրագում: 26.6x17.7 (Ա), 26.5x17.9 (Բ) սմ:

պատկերված են բարձրաքանդակ, գահին բազմած չորս ավետարանիչներն իրենց խորհրդանիշների հետ միասին՝ Մարդ, Առյուծ, Եզ, Արծիվ հաջորդականությամբ: Աննկարագրելի գեղեցիկ է Բ փեղկին ամրացված ոսկեզօծ թիթեղի Ծննդյան պատկերագրությունը. մոգերի ընթացքով (երկու տեսարան միաժամանակ՝ մոտենալը քարայրին եւ երկրպագությունը), հովիվներով, հեծյալ եւ հետեւակ զինվորների բանակով, շեփորահարողներով եւ թմբկահարողով: Ամպերի միջից դեպի նորածինն են իջնում բազմաթիվ հրեշտակներ, իսկ փայլատակող ասղին պատկերված է Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին: Թիթեղի վերին ձախ կողմում՝ գալարափաթույթին երկաթագիր, կա Եսայի մարգարէ հայտնի խոսքերը. «ԱՀԱ /ԿՈՅՍ ՅՂ(Ա)ՍՅԻ ԵՒ /ԾՆՅԻ ՈՐԴԻ ԵՒ /ԿՈՉԵՍՑԵՆ Զ(Ա)ՆՈՒՆ /Ն(Ո)Ր(Ա) ԷՄՄ(Ա) ՆՈՒԷԼ» (Ես. Է 14): Իսկ ամպերին ժապավենաձեւ երկաթագիր կա Ավետարանի հետեւյալ հատվածը. «ՀՐ(Ե)ՇՏ(Ա)ԿՔ ԻՋԵ[Ա]Լ ՅԵՐԿ/ՆԻՑ ԵՐԳԷԻՆ. ՓԱՌՔ Ի /Բ[Ա]ՐՁ[Ո]ԻՆՍ Ա(ՍՏՈՒԾՈ)Ց ԵՒ ԵՐԿԻՐ /Խ(Ա)Ղ(Ա)ՂՈՒ(Թ)Ի(ԻՆ), /Ի ՄԱՐԴԻՔ ՀԱՃՈՒ(Թ)Ի(ԻՆ)» (Ղուկ. Բ 14):

Ս. Էջմիածնի թանգարանների կրկնակազմերի մեջ առանձնանում է 1669 թ. Արզրումում ընդօրինակված[25] մագաղաթե ձեռագիր Պարզատումարի կազմը՝ պատրաստված 18-րդ դարում Կ. Պոլսում կամ Կեսարիայում (նկար 2): Կրկնակազմը 10,3x7,2 սմ մեծության է, արծաթից, արծնապատ: Ա փեղկի մեջտեղում՝ 7,2x3,2 սմ չափի ուղղանկյուն շրջանակի մեջ, բարձրաքանդակ, պատկերված է Տրդատ թագավորի մկրտությունը, որի գլխավերեւում՝ ամպերի մեջ, աղավնակերպ Սուրբ Հոգին է (երկինքը՝ բաց կապույտ, իսկ աղավնակերպի շուրջ՝ շագանակագույն արծն է): Աջ կողմում՝ Գր. Լուսավորչի գլխավերեւում, պատկերված է Նոյի տապանը: Փեղկի եզրերում, պատկերագրության շուրջ զետեղված են փոքրիկ զարդանախշեր եւ կարմիր (2), նռնագույն (6), կանաչ (4) գույնի քարեր: Բ փեղկի եզրազարդերը ձեւավորված են Ա փեղկի նմանությամբ (8 նռնագույն եւ 4 կանաչ քարեր): Փեղկի մեջտեղում, բարձրաքանդակ, պատկերված է «Թարգմանիչք». ձախ կողմում Ներսես Շնորհալին է՝ եպիսկոպոսական գավազանով, մեջտեղում՝ Սահակ Պարթեւ կաթողիկոսը, աջ կողմում՝ Մաշտոց վարդապետը՝ վարդապետական գավազանով. երեքն էլ սրբացված են եւ լուսապսակներով: Պատկերի վերեւում՝ ամպերի մեջ, երկու հրեշտակներ ձեռքերով պահել են հայոց գրերը՝ այբուբենը: Կրկնակազմի մեջքին՝ 10,1x2,2 սմ չափի արծաթե թիթեղին, ձուլման եւ դրվագման եղանակներով պատկերված են բաց կապույտ, մուգ կանաչ եւ շագանակագույն երանգներով արծնապատ զարդանախշեր:

Պատկերագրությամբ առանձնանում է 18-րդ դարի վերջում Էջմիածնում պատրաստված արծաթե կրկնակազմը[26]: Այն 26,4x18,8 սմ մեծության է, պատրաստված է արծաթից՝ դրվագման եղանակով: Պատկերագրությունը պարզունակ ձեւով է արված: Ա փեղկին՝ 17,7x13,5 սմ չափի ոլորապտույտ շրջանակի մեջ, բարձրաքանդակ, պատկերված է Ս. Էջմիածինը: Ձախ եւ աջ կողմերում պատկերված են երկու գմբեթավոր, համաչափ խորաններ, որոնց միջեւ եղած տարածությունում կան իրար մեջ պատկերված գմբեթավոր եւս փոքր եւ մեծ այլ խորաններ (փոքրով հավանաբար փորձել են պատկերել կենտրոնական մուտքի դիմացի գմբեթավոր զանգակատունը): Յուրաքանչյուր գմբեթին կա մեկական ծի-

25 Գանձատուն թ. 41. գրիչ՝ Դավիթ երեց, սպասող՝ Ջուղայեցի Խաչատուր: Թերթ՝ 70:
26 Մայր Տաճար թ. 877. փայտագիր Աւետարան, Կ. Պոլիս, 1769 թ.:

գար: Մեծ գմբեթի վերեւում Հիսուսի կիսանդրին է՝ աջ ձեռքը պարզած ներքեւ, իսկ ձախում՝ ոսկե ուռ (մուրճ) բռնած: Ձախ եւ աջ կողմի միջին չափի գմբեթների վրա երկնքից սրընթաց իջնում են երկու աղավնիներ: Փոքր գմբեթավոր խորանի մեջ պատկերված է Աստվածամայրը՝ կրծքի մոտ ձեռքերն իրար միացրած, ոտքերի տակ կիսալուսին: Միջին գմբեթավոր խորանների մեջ, բարձրաքանդակ, պատկերված են ս. Ստեփանոս Նախավկան եւ ս. Հովհաննեսը՝ հայացքները դեպի Հիսուսն ուղղած: Օվալաձեւ շրջանակից դուրս՝ 21,4x14,6 սմ չափի ուղղանկյուն շրջանակի ներսի չորս անկյուններում, կլոր օղակների մեջ, բարձրաքանդակ, պատկերված են ավետարանիչներն իրենց խորհրդանիշերի հետ միասին: Ավետարանիչների պատկերագրության շուրջ կան գեղեցիկ ծաղկազարդեր: Փեղկին եզրագծով դրվագված են իրար միացված գեղեցիկ ծաղկազարդեր: Կրկնակազմի Բ փեղկը, կարծես, պատրաստված է այլ ձեռքով՝ փորձելով նմանեցնել Ա փեղկի զարդերին: Փեղկի մեջտեղում՝ 20,x13,6 սմ չափի ոլորապտույտ, օվալաձեւ շրջանակի մեջ պատկերված է Հարության տեսարանը. Հիսուսը՝ երկնքում (լուսապսակին քառաթեւ խաչ), իսկ ամպերի փոխարեն դրվագված են հրեշտակների՝ լուսապսակով եւ առանց լուսապսակի գլխիկներ: Ներքեւում՝ գերեզմանի ձախ մասում, հրեշտակ է նստած, իսկ գերեզմանի շուրջ, գետնին ընկած են չորս զինվորներ: Օվալաձեւ շրջանակից դուրս՝ 21x14,6 սմ չափի ուղղանկյուն շրջանակի ներսի անկյուններում պատկերված են երկթեւ մեկական հրեշտակների գլուխներ: Փեղկին եզրագծով արված են ծաղկազարդեր, որոնք արծաթագործը փորձել է նմանեցնել Ա փեղկի արհեստավարժ արված ծաղկապատկերներին[27]:

Ս. Էջմիածնի թանգարանների կրկնակազմերի արձանագրություններում կիրառված տառատեսակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձանագրությունները մեծ մասամբ փորագրված կամ դրվագված են երկաթագիր կոչվող տառատեսակով: Սակավ հանդիպում են բոլորգիր տառատեսակով (Մայր Տաճար թ. 884. 1677 թ., թ. 24. 17-րդ դ., թ. 879. 1798 թ., Կ. Պոլիս, թ. 872. 1769 թ., Էջմիածին, թ. 869. 19-րդ դ., Գանձատուն թ. 105. 18-րդ դ., թ. 154. 18-րդ դ., Կ. Պոլիս, թ. 156. 1820 թ., Հին Վեհարան թ. 488. 1903 թ., Կուտինա), երկաթագրի եւ բոլորգրի խառը կիրառությամբ (Գանձատուն թ. 100. 1781 թ. , թ. 282. 18-19-րդ դդ., Վան), երկաթագրի մեջ առանձին բոլորգիր տառերի (**Յ**՝ Մայր Տաճար թ. 24. 1641, 1678 թթ., Գանձատուն թ. 152. 1759 թ., Սբ. Գեորգ (Լիմ), թ. 280-281. 1768 թ. Նոր Ջուղա՞, Մայր Տաճար թ. 879, 1798 թ., Կ. Պոլիս, Գանձատուն թ. 275. 1803 թ., Վանի Սբ. Էջմիածին, թ. 276. 1803 թ., Վանի Սբ. Էջմիածին, Հին Վեհարան թ. 474. 1805 թ., Կ. Պոլիս, Հին Վեհարան թ. 363. 1837 թ., Կարին, **Ծ, Զ**՝ Գանձատուն թ. 101. 18-րդ դ., Կ. Պոլիս, **Ճ**՝ Մայր Տաճար թ. 24. 1683 թ., **Յ**՝ Հին Վեհարան թ. 474. 1805 թ., Կ. Պոլիս, թ. 363. 1837 թ., Կարին, **Եւ**՝ Գանձատուն թ. 156. 1820 թ., թ. 4146/Գանձատուն թ. 30. 1855, Սբ. Պողոս եւ Պետրոս եկեղեցի) կիրառմամբ արձանագրություններ:

Արձանագրություններում տեղ խնայելու նպատակով սուրբգրային որոշ բառեր կիրառված են հապավված ձեւով: Հապավված բառի վրա դրվում է պատվի նշան (հորիզոնական գծիկ, երբեմն նաեւ առանց գծիկի): Հապավումը պահպանվում է նաեւ բառաթեքման ժամանակ.

27 Կրկնակազմի Ա եւ Բ փեղկերը սխալ են տեղադրված: Ա փեղկի վրա պահպանվել են կապիչների՝ փեղկին միացված հատվածները, որոնք պետք է միանալով ամբանային Բ փեղկին պահպանված 2 բարձրադիր, մեջտեղ դուրս եկած գամերին:

ԱԾ_ Աստուած (Գանձատուն թ. 98, 156, 280-281, Մայր Տաճար թ. 879, Հին Վեհարան թ. 362),

ՏՐ _ Տէր (Գանձատուն թ. 36, 98, 152, 158, 248, 282, Մայր Տաճար թ. 24, 876, 879, 883, Հին Վեհարան թ. 362),

ՅՍ _ Յիսուս (Գանձատուն թ. 98),

ՔՍ _ Քրիստոս (Գանձատուն թ. 98, Մայր Տաճար թ. 879),

ՍԲ _ Սուրբ (Գանձատուն թ. 30, 65, 98, 101, 106, 107, 108, 148, 152, 153, 157, 248, 273-276, 280-281, Հին Վեհարան թ. 362, 363, 474, Մայր Տաճար թ. 24, 876, 879, 880):

Արձանագրություններում կիրառված է նաեւ կցագրություն կամ կապգիր, որը հապավման կամ սղման այն ձեւն է, երբ տարբեր տառերի անհրաժեշտ ստեղներն իրար ձուլվելով՝ գործածվում են իբրեւ ընդհանուր: Կցագրություններով են հանդես գալիս բազմաթիվ տառակապակցություններ.

(ԱՄ) - ԱԲՐԱՄԻՆ (Գանձատուն թ. 152), ԱԲՐԱՀԱՄԻ (Մայր Տաճար թ. 883), ՏԻՐԱՄԱՅՐ (Գանձատուն թ. 280, 281), ԶԵՌԱՄԲ (Գանձատուն թ. 30, 275, 276, 280-282), ԱՄԷՆ (Գանձատուն թ. 280), ՓԻՐԿԱԼԱՄՈՒ (Գանձատուն թ. 275, 276), ԿԱՄ (Մայր Տաճար թ. 869), ՇԱՄՑՈՒՆԿԱ (Գանձատուն թ. 65), ՔԱՄԷԻՆ (Մայր Տաճար թ. 24),

(ԱՆ, ԱՆՍ) - ԺՈՂՕՎԷՐԴԵԱՆ (Գանձատուն թ. 275, 276), ՀՕՀԱՆՆԷՍԻ (Մայր Տաճար թ. 869), ՀԱՆԳՈՒՑԵԱԼ (Գանձատուն թ. 65), ԸՍՏԵՓԱՆՈՍԻՆ, ԱՋԱՊԽԱՆԻՆ (Մայր Տաճար թ. 24), ՅԱՆԱՈՒՆ (Մայր Տաճար թ. 24), ԱՒԵՏԱՐԱՆՍ (Գանձատուն թ. 152),

(ԱՐ) - ՄԵՂՍԱՅՊԱՐՏ (Գանձատուն թ. 98), ԱՒԵՏԱՐԱՆՍ (Գանձատուն թ. 105 152, 248, 275, 276, 280-281, Մայր Տաճար թ. 880, 883), ՄԱՐԳԱՐԻՆ (Գանձատուն թ. 152, 274), ԵՂԲԱՐ (Գանձատուն թ. 100), ԻսԱՍԱՐԱԿ (Գանձատուն թ. 275, 276), ՎԱՐԴԱՊԷՏԻՆ (Մայր Տաճար թ. 869), ԱՐԾԱԹԱՊԱՏ (Գանձատուն թ. 248),

(ԱԻ) - ԱՒԵՏԱՐԱՆՍ (Գանձատուն թ. 107, 248, Մայր Տաճար թ. 880), ՄՈՒՐԱՒՀԻՆ (Գանձատուն թ. 65),

(ԳԻ) - ՅԱՋԳԻՍ (Գանձատուն թ. 30),

(ԴԻ) - ՈՐԴԻ (Գանձատուն թ. 30, 274, Հին Վեհարան թ. 362, Մայր Տաճար թ. 24),

(ԴԻԱ) - ԴԻԱՏՕԻ (Գանձատուն թ. 65),

(ԵԻ) - ԵԻ (Գանձապուն թ. 107, Մայր Տաճար թ. 879),

(ԷԻ) - ՔԱՄԷԻՆ (Մայր Տաճար թ. 24),
(ԷՍԻ) - ՀՈՀԱՆՆԷՍԻ (Մայր Տաճար թ. 869),

(ԹԱ) - ԹԱՆԻԵԼԻ (Գանձապուն թ.108),
(ԹՎ) - ԹՎԻՆ (Գանձապուն թ.108, Մայր Տաճար թ. 24),

(ԻՆ) - ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Մայր Տաճար թ. 880),

(ԿԱ) - ԿԱՆԿՆՈՒՄ (Գանձապուն թ. 30), ԿԱՐԱՊԵՏԻՆ (Գանձապուն թ. 30),
(ԿԵ) - ԵԿԵՂԵՑՈՒՆ (Գանձապուն թ. 30),

(Կ Է) - ՅԻԾԱՏԱԿ Է (Գանձապուն թ. 30, 65, 100, 106, 107, 108, 157, 248, Մայր Տաճար թ. 883, 869),
(ԿԷ) - ԵԿԷՂԷՑՈՅՆ (Գանձապուն թ. 65),
(ԿԸ) - ԿԸՆՈՉ (Գանձապուն թ. 30),

(ԿԻ) - ՍԱՀԱԿԻ (Հին Վեհարան թ. 362), ՄԱՆՈՒԿԻՆ (Գանձապուն թ. 30),

(ԿՈ) - ԿՈՂԱԿԻՑ (Գանձապուն թ. 65),
(ԿՐ) - Կ[Ա]ՐԱՊԵՏԻՆ (Գանձապուն թ. 100),

(ՄԱ) - ՄԱՐՏԻՐՈՍ(ԻՆ) (Գանձապուն թ. 30, 35, 152, Հին Վեհարան թ. 474, Մայր Տաճար թ. 24), ՄԱՀՏԵՍԻ (Գանձապուն թ. 108, 157, Մայր Տաճար թ. 869), ՄԱՐԴԻՔ (Մայր Տաճար թ. 879), ՄԱՐԹԱՑԻՆ (Գանձապուն թ. 274), ՅԱՍՄԱՆ. ՄԱՆՈՒԿԻՆ (Գանձապուն թ. 30),
(ՄԱՏ) - ՄԱՏԹԷՈՍ (Հին Վեհարան թ. 487),

(ՄԱՐ) - ՄԱՐԿՈՍ (Հին Վեհարան թ. 487), ՄԱՐՔԱՐ (Գանձապուն թ. 274),

(ՄԻ) - ՄԱՐԻԱՄԻՆ (Մայր Տաճար թ. 24),

(ՆԱ) - ՆԱՎԻՐԱԿ (Գանձապուն թ. 101), ԷՋՄԻԱԾՆԱՑ (Գանձապուն թ. 275, 276),

(ՆԻ) - ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ (Գանձապուն թ. 280, 281),
(ՈԵ) - ՀԱՋՌՈԵՈՒ (Գանձապուն թ. 65),
(ՈՍ) - ՍՏԵՓԱՆՆՈՍ (Մայր Տաճար թ. 880),

(ՈՐ) - ԹԷՈԹՈՐՈՍԻ (Գանձապուն թ. 106), ՈՐ (Մայր Տաճար թ. 880, 883), ՈՐԴՈՑՆ (Գանձապուն թ. 153),

(ՈՒ) - ՃՈՒՂԱՑԵՑԻ (Գանձապուն թ. 98), ԹՈՒՄԵՆՑ (Գանձապուն թ. 280, 281), ԹՈՒՌՆ (Գանձապուն թ. 106), ՑԱՐՈՒԹԻՒՆԻՆ (Գանձապուն թ. 107), ՀԱՆԳՈՒՑԵԱԼ (Գանձապուն թ. 65, 157, Հին Վեհարան թ. 474, Մայր Տաճար թ. 869), ԹԱԳՈՒՀԻՈՑ, ՀՈԳՈՒՆ, ԵԿԵՂԵՑՈՒՆ, ԷՏՐԷՆԷՈՒ (Գանձապուն թ. 157), ԳԱԼՈՒՍՏ, ՋԱՆՈՒՆ, ՀԱՃՈՒԹԻՒՆ (Մայր Տաճար թ. 879), ԴՈՒՌՆ (Գանձապուն թ. 65, 108), ՑԱՋԳՈՒԼ, ՏԻՐԱՑՈՒ, ԳՈՒՂՆ (Հին Վեհարան թ. 474), ԴՈՒՍՏՐ (Գանձապուն թ. 65, 274), ՏՈՒՆ (Գանձապուն թ. 274), ԹՈՒԻՆ (Գանձապուն թ. 248), ՏԻՐՈՒՀՈՑՆ, ՔԻՇՆՈՎՈՒ (Հին Վեհարան թ. 362), ՄՈՒՐԱՒՀԻՆ, ՇԱՄՑՈՒՆԿԱ (Գանձապուն թ. 65), ՓԱԼՈՒԼՑԻ, ՄՈՒՏԱՎԱՐԵՆՑ, ԼՈՒՍԱՀՈԳԻ, ԱՍՊԱՏՈՒՐԻՆ, ՄԱՆՈՒԿԻՆ (Գանձապուն թ. 30), ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ, ՆՈՒԻՐԷ (Գանձապուն թ. 273),

(ՊԱ) - ԱՐԾԱԹԱՊԱՏ (Գանձապուն թ. 153, 248), ԱՍՊԱՏՈՒՐԻՆ (Գանձապուն թ. 30),

(ՊԵ) - ԿԱՐԱՊԵՏԻ (Գանձապուն թ. 30, 100, 148), ՊԵՏՐՈՍԻՆ (Գանձապուն թ. 30, 100), ԵՂԻՍԱՊԵՏԻՆ (Գանձապուն թ. 30),

(ՊԷ) - ՎԱՐԴԱՊԷՏԻՆ (Մայր Տաճար թ. 869),
(ՊՂ) - Պ[Օ]ՂՈՍԻՆ (Մայր Տաճար թ. 24),

(ՍԲ) - Ս(ՈՒՐ)Բ (Գանձապուն թ. 107, Մայր Տաճար թ. 24), Ս[Ր]ԲՈՑՆ (Գանձապուն թ. 157),

(ՍԻ) - ՊԵՏՐՈՍԻՆ (Գանձապուն թ. 100), ՄԱՀՏԵՍԻ (Գանձապուն թ. 30, 107, 108, Մայր Տաճար թ. 869), ՀԻՊՈՂՈՍԻՆ, ՍԱՐԳՍԻՆ, ԿԻՐԱԿՈՍԻ (Գանձապուն թ. 153), ՓԻԼԻՊՈՍԻ (Գանձապուն թ. 274), ՀՐԻԲՍԻՄԷԻՆ (Հին Վեհարան թ. 362):

Արձանագրությունները փորագրված են բարբառախառն գրաբարով, որոնք արտացոլում են տեղական խոսվածքներին բնորոշ նրբերանգներ: Օրինակ՝ 1740 թ. պատրաստված

կրկնակազմին արձանագրված է. «Ս(ՈՒՐ)Բ ԱՎԵՏԱՐԱՆՍ ԸՋՑԻԾԱՏԱԿ ԻՄ ԵՒ ԵՐԱԽՏԱՎՈՐԱ/ՑԸՍ ԻՄՈՑ ԵՒ ԾՆՈՂԱՑՍ ԵՒ ԱՑԼ ԱՐՈՒՆԱՌՈՑ ՄԵՐՁԱԵՒՈՐԱՑՍ, ՈՐ ԵՄ /ՃՈՒՂԱՑԵՑԻ ՄԵՂՍԱՅՊԱՐՏ ԽԱՉԻԿՍ՝ ՈՐԴԻ ՅԱԿ/ՈԲ/ՃԱՆԻ ԵՒ ՀԱՍԿԱՎ ՋՕՐԱՊԻԱՆՑ, ԹԻՎՆ 1740, ՌՃՁԸ (1739): //*(Ա փեղկ)* ...[ԱՒՐՀ]ՆԻԱԼ Է Ա(ՍՏՈՒԱ)Ծ, ՈՐ ԿԱՏԱՐԻԱՑ ՁՈՒԽՏՍ ՈՒ/ԽՏԱՎՈՐԱՑ: Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)Ծ ՈՂՈՐՄԻԱՑ ՊՏՂԱՅՏՈՒ ԻՑԻ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵ/ՂԵՑԻՍ, ՈՐ Է ԿԱ[Ռ]ՈՒՑԻԱԼ ՀԱՐՄՆ Ի Ս... (վնասված)»[28]: 1769 թ. արձանագրությունում կարդում ենք. «Ց[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է /ԱՐԾԱԹԱՊ/ԱՏ ԱՒԵՏԱՐԱՆ/ԸՍ ՊԷԵՕՂԼԻ ԷՂԵԱԼ //ՏԸՂՕՑԸ, /Ի ԴՈՒՌՆ /ՄՈՒՇՈՒ Ս(ՈՒՐ)Բ ԿԱ/ՐԱՊԵՏՈՒ. ԹՎԻՆ ՌՄԺԸ (1769)»[29], Իսկ 1803 թ. արձանագրությունն այսպես է. «[Ց]ԻՇԱՏ[Ա]Կ Է /Ս(ՈՒՐ)Բ ԱՎԵՏ/ԱՐԱՆՍ ԷՋ/ՄԻԱԾՆԱՑ /ԽԱՍԱՐԱԿ /ԺՈՂՕՎԷՐ/ԴԵԱՆ, ՁԵ/ՌԱՄԲ ՓԻՐ//ԿԱԼԱՄՈՒ /ՈՐԴԻ ՅՕ/ՎԱԿԻՄԻՆ, /ՈՐ ԵՏՈՒՆ /Ի ԴՈՒՌՆ /ՎԱՆԱՑ Ս(ՈՒՐ)Բ /ԷՋՄԻԱ/ԾՆԱՑ»[30]:

Արձանագրություններում երբեմն հանդիպում է ** Յ** կիսաձայնի անհարկի կիրառում, այսինքն՝ բառի քմայնացման (պալատիզացիայի) երեւույթ. ՄԵՂՍԱՅՊԱՐՏ, ՊՏՂԱՅՏՈՒ (Գանձապուն թ. 98), ԱՌԱՅՔԵԼ (Մայր Տաճար թ. 24):

Հայկական անունների կողքին կիրառվել եւ ճանաչում են ստացել օտարամուտ հետեւյալ անունները՝ ՍՈՒՂՈՒՄ (Մայր Տաճար թ. 24, 1678 թ.), ԱԹՈՒՆ, ՍՈՈՒԱ, ՔԱՄԷ (Մայր Տաճար թ. 24, 1683 թ.), ԱԹԱՆ (Մայր Տաճար թ. 24, 17-րդ դ.), ՁՆԱՂ, ՄՍԿԱՑԻ (Գանձապուն թ. 152, 1759 թ. Լիմի Սբ. Գեւորգ), ՀԼԷ (Գանձապուն թ. 100, 1781 թ.), ՅԱՁԳՈՒԼ, ՌԱԲԻ, ՅԱՏԻԿԱՐ (Հին Վեհարան թ. 474, 1837 թ. Շիսնոց Սբ. Հովհաննես), ԴԻԱՏՕ=ՏԱՏՕ, ՄՈՒՐԱՒՀ, ՀԱՎԷ (Գանձապուն թ. 65, 1846 թ. Հազրու): Տեղային բնորոշում ունեցող (օրինակ՝ ԲԵՆԿՑԻ ԱՂԷՔՍԱՆԴՐ՝ Գանձապուն թ. 106, 1781 թ. Սբ. Թեոդորոս, ՁԷՑԹՈՒՆՑԻ ՏԷՐ ՅԱԿՈԲ՝ Գանձապուն թ. 158, 1788 թ., ԲԵՆԿՑԻ ՕՀԱՆՆԷՍ՝ Գանձապուն թ. 157, 1795 թ. Էդրինե, ՓԻԼԻՊԵՑԻ ԴԱՒԻԹ՝ Գանձապուն թ. 156, 1820 թ., ՏԵՐՊԵԳԻՐՑԻ ՍԱՀԱԿ՝ Հին Վեհարան թ. 362, 1828 թ. Քիշինեւ, ՓԱԼՈՒԼՑԻ ԹԱԹՈՍ՝ Գանձապուն թ. 30, 19-րդ դ., Սբ. Պողոս եւ Պետրոս եկեղեցի) եւ այլ (օրինակ՝ ՓԱՐԻԽԱՆ՝ Մայր Տաճար թ. 24, 1678 թ., ԱՋԱԲԽԱՆ՝ Մայր Տաճար թ. 24, 1678 թ., ՇԱՀՈՒՄ՝ Մայր Տաճար թ. 24, 1639 թ.) մականուններից բացի արձանագրություններում հիշատակված են նաեւ ՍԱՌԱՓ[31] ԱՂԷՔՍԱՆԴՐ (Գանձապուն թ. 106, 1781 թ. Ս. Թեոդորոս), ՍԱՌԱՓ ՅԱՐՈՒԹԻՒՆ (Գանձապուն թ. 107, 1793 թ. Սբ. Թեոդորոս), ԵԱԼՏՋՃԻ[32] ՕՀԱՆՆԷՍ (Գանձապուն, թ. 108, 1799 թ. Մուշի Սբ. Կարապետ):

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

---

28 Գանձապուն թ. 98: Արձանագրության ԵՒ փառերը բոլորգիր են՝ երկաթագրերին հավասար:

29 Գանձապուն թ. 148:

30 Գանձապուն թ. 275, 276:

31 **Սառաֆ** (արաբ.) նշանակում է դրամափոխ, լումայափոխ, սեղանավոր. տե՛ս Ռ. **Ղազարյան, Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան, հ. Բ (Հ-Ֆ), Երեւան, 1992, էջ 313:

32 **Եալտզճի** նշանակում է ոսկեգործիչ. տե՛ս «Մեծ բառարան օսմաներէնէ հայերէն», երկասիրութեամբ՝ Պետրոս Զէքի Կարապետեան, Կ. Պոլիս, 1912, էջ 940: